



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

0

1

32

33

Արժույթի դասագրք

Կոմունիստ

Լրագրք

02

3

4

05

Տարիք

1904

1802

1260

1350

ՀՐԱՀԱՆԳԻՉ

Վ. Լ. Ա. Յ.



ՀԱՌԱԳԵՑ

Ց. ՂԵՒՈՆԳ ԳԱՀԱՆԱՅ ՓԱՓԱԶԵԱՆ



Կ Ա Լ Ա Յ

ՑՊ. ՂԵՒՈՆԳ ԳԻ. ՓԱՓԱԶԵԱՆ

1902

84-31

459

ՀՐԱՆՔՆԵՐԻ ԳԵՊԵՐ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Ուսանողներու և քաղաքակիրթ ազգաց բարոնց անուսման վրայ բարոյական վիրասանութիւններու կատարած դերը անհերքելի փաստերով հաստատեալ ըլլալով, այդ մասին առելի երկարաւնոյթեան հարկ չեմք տեսներ: Ասոր ջօշափելի ապացոյց կրնայ համարուիլ կես դարի առելի ժամանակի ՚ի վեր մեր ազգին մեջ ընդ տեսած նշանաւոր հեղինակներու ստուարա-

40125-57 P



203-2015



19 203

հասար կրկնրոս թարգմանոթիւններ, ինչ-  
պէս նաեւ ազգային վիպագրողներոս ինք-  
նատիպ հնդիւնահոթիւններ :

Մենք նաւ սոյն ճշմարտոթեան համոզ-  
ուած, եւ մեր ձեռքն ունեցած միջոցներն Ազ-  
գին ընդհանրոթեան օգտակար հանդիսա-  
ցընելոս նպատակաւ, խորհեցանք՝ բարոյա-  
կանացոսցիչ հանգամանք ունեցող փոքրիկ  
վիպեր հաւաքելով, եւ ոմանք մեզին թարգ-  
մանելով տետր առ տետր պատկերագարոթի  
չոյս ընծայել . պատշաճ թողեցաւ մեզ նաեւ  
խորաբանչիւր պատմոթեան վերջ ընտրանօր  
իմաստաչից առածներ ալ յօղել :

Եթե մեր սոյն ձեռնարկ սիրելի Ազգայ-  
նոց առջեւ բաղձացոսած նպատակին արժա-  
նանայ, մենք զմեզ յիովին վարձատրուած կը  
համարիմք :





# ՀՐԱՅԱՆԳԻՉ ՎԷՊԵՐ

Ա.

## ՄԱՅՐԱԿԱՆ ԳՈՒԹԸ

Մայրիկի Նորմանտիոյ եզերքը գիւղակի մը մէջ բնակեալ տիկին Պօտուան՝ բաւական հարուստ էր: Հարը՝ որ Նորմանտիոյ մէջ հարուստ ազարակատէր մ'էր, մեռած՝ եւ տիկին Պօտուանի ու անոր ամուսնոյն բարեկեցութիւնը նպաստելու հարցառութիւն մը թողած էր: Սակայն ամուսինը՝ այս հարցառութեան տիրանալէ 10-12 տարի ետքը մեռաւ, եւ տիկինը այրիացաւ մնաց իւր միակ որդւոյն Լուիի հետ, որ 10-12 տարեկան էր:

Լուի երբ դէպ ՚ի ամուսնական հասակը

բարձրացաւ, մայրը հաստատապէս որոշեց՝ զանի ամուսնացնել մերձակայ հարուստ ա. գարակատեարց մէկուն աղջկան հետ, եւ սյրպէս ընդարձակել տունը. բայց Լուի 'ի դէրեւ հանեց մօրը տարիներէ 'ի վեր ըրած որոշումը, եւ հարուածեց ջնջեց անոր բոլոր ակնկալութիւնները: Լուի սիրար տըւաւ՝ աշխարհի վրայ ծառատունկ մ'իսկ չունեցող ամենաաղքատ ձկնորսի մը աղջկան, եւ առաջադրեց ամուսնանալ անոր հետ: Մայրը սկսաւ դիմադրել որդւոյն այս առաջադրութեան ու բաղձանաց. հազարաւոր առարկութիւններով ջանաց համոզել, խօսեցաւ իւր մայրական իրաւանց վրայ, բայց չ'յաջողեցաւ, եւ վերջապէս նկատելով որ Լուի անդրդուելի կը մնայ, եւ ձրկնորսին աղջկան հետ սկիտի ամուսնանայ, ըսաւ անոր.

-- Ես ամեն ջանք ու ճիգ Թափեցի՝ ըզքեզ դիտաւորութենէդ ետ կեցնելու համար. սակայն դու անխախտ մնացիր յա. մառութեամբ. սառ ձկնորսին աղջիկը, բայց մի ըսեր Թէ այսուհետեւ մայր ունիս աշ-

խարհի վրայ. ինէ դանկ մ'իսկ մի՛ յուսար մինչեւ մահս:

Մայր ու որդի այսպէս չբաժնուելէ ետքը՝ ձկնորսին աղջկան հետ Լուիի ամուսնական արարողութիւնը կատարուեցաւ:

Տիկին Պատուան հաստատուն մնաց իւր յայտարարութեան վրայ: Չէր նայէր որդւոյն երեսը. կարելոթութիւն չէր տար անոր կնոջ, ազգականաց, եւ անոր հետըզհետէ ունեցած զաւակաց. միայնակ կը շարունակէր իւր սովորական կեանքը:

Լուի սկսաւ երթալ ձկնորսութիւն ընել աներոջն հետ: Սակայն դիւրին չէր՝ այսպիսի սակաւաշահ գործով մը հայթայթել ընտանեաց պէտքերը. շատ նեղութիւն կը կրէր, բայց համբերութեամբ ու անտրըտունջ կը հանդուրժէր՝ կնոջն ու զաւակացը վրայ ունեցած սիրոյն համար: Երբ ծովուն ալիքներէն, մահուան վտանգներէ տնակը կը վերադառնար, եւ գեղեցիկ ամուսինը փոքրիկ զաւակներովն ընդ առաջ կը վազէր խայտանօք, Լուի կը մոռնար ամեն նեղութիւն, ամեն տառապանք, եւ իւր

առջեւ կը բացուէր կը պարզուէր սիրուն աշխարհ մը :

Այսպէս անցան 4-5 տարիներ ալ : Լուի կիրակի օրերը երբ ամուսնուցն հետ եկեղեցի կ'երթար եւ մօրը կը պատահէր, որ դիական պարտաւորութիւնը կը կատարէր կը բարեւէր մեծարանօք, բայց մայրը՝ ռխակարւածեամբ՝ ամենափոքր նայուածք մ'իսկ կը խնայէր, եւ հարսին ու թոռներուն երեսն անգամ նայելու չէր զիջանէր :

Վերջապէս՝ ձմեռային օր մը սոսկալի փոթորիկ մը բրդաւ : Քամին կը սուլէր՝ գիւղին բնակարաններն 'ի հիմանց քանդելու ուժ գնուածեամբ : Ծովուն լեռնաչափ անլքները կը խուժէին կը հարուածէին քարաժայռերն, որոց վրայ հաստատուած էր գիւղակը : Ան ու սարսափ աիրած էր բոլոր գիւղակին մէջ, որոյ բնակչաց մեծագոյն մասն ձկնորս էին . եւ աւելի՛ մեծ էր այն ընտանեաց սարսափն, որ ծովու վրայ եղբայր, ամուսին, զաւակ ունէին :

Յայնժամ տիկին Պօտուան ալ յուզուած էր իւր տան մէջ : Սպասուհին Անէթ՝ որ

պատուհանին ետեւէն կատաղի ծովը կը դիտէր ակնկառոյց , յանկարծ դարձաւ գոչեց :

— Ո՞ն, ի՞նչ օդ է, ո՞րչափ սաստիկ փոթորիկ է, արդեօք քանի՞ մարդիկ վրտանգի մէջ կը գտնուին :

— Լուէ՛ աղջիկ, գոցէ՛ բերանդ . անգամ մ' ալ մի ըսեր այդ խօսքը, ըսաւ տիկին Պօտուան :

Եւ այս տագնապալի խօսքն սրտաբերեւէ ետքը՝ սրտին անձկութիւնը փարատելու դիտմամբ, գործ մը առաւ, պատուհանին առջեւ գնաց : Սպասուհին՝ որ տիրուհիին առջեւ ոտքի վրայ կանգնած էր, տեսնելով փոթորիկին ահաւոր աղէտները, չ'կրցաւ զուլել ինք ինքն, եւ դարձեալ խօսեցաւ :

— Ա՛ն, ահա կործանեցաւ Պ. Պէրմբանի ծխնէլոյզը . Պ. Գոնշայի երդիլին մէկ կտորը կախուած է . տե՛ս, տիկին, շատ մարդիկ դէպ 'ի ծովէզերքը կ'իջնեն . արդեօք ի՞նչ վտանգ պատահեցաւ . ես մինչեւ ցարդ այսչափ սոսկալի փոթորիկ տեսած չեմ :



Առդարեւ փոթորիկը դուրսը ծանր աղէտներ, աւերներ կը գործէր: Կղմինտրեր կը թռչէին, ապաւեիներ ջարդակոտոր կ'ըլլային. տարակոյս չ'կար թէ՛ ճովուն վրայ բազմաթիւ նաւեր կը խորտակէին անդրն. դասոյշ կ'ըլլային:

Տիկին Պօտուան վերջապէս ելաւ տեղէն, եւ սպասուհիին մօտենալով ըսաւ.

— Աղջիկ, որովհետեւ դու այսչափ հոգ կը տանիս, աղէ՛, հագի՛ր կօշիկներդ, եւ իջի՛ր ծովեզերքը՝ տեղեկութիւն ա՛ռ:

Սպասուհին մեկնելու ատեն, տիկինը պատուիրեց որ շուտ վերադառնայ հաղորդէ իրեն ի՞նչ որ իմանայ: Սպասուհիին մեկնելէն ետքը՝ տիկին Պօտուանի տագնապն աւելցաւ. սենեակին մէջ թափառիլ սկսաւ. աչքերը սոսկումով սկսան բաներ որոնել շուրջը: Երբեմն այդ սենեակին մէջ զաւակը ծնած սնած էր. այդ սենեակին մէջ պահած էր որդւոյն բոլոր տըղայական գոյքը. անդ յանկարծ աչքին դըպաւ որդւոյն փոքրիկ մահճակալը. երեւակայեց թէ՛ այդ մահճակալին մէջ հազար

նազանքով մեծցուցած հոգեհատորն յայնժամ անաւոր փոթորիկին լեռնաչափ բարձրացուցած ուռեցուցած ալիքներուն զոնեղած է. կակղացաւ սիրտը՝ որ խստացած քարացած էր որդւոյն ամուսնութեան վրայ. անհամբեր կը սպասէր տեղեկութիւն առնելու որդւոյն վրայ: Վերջապէս տեսնելով որ սպասուհին կ'ուշանայ, վերադառնաւ առաւ՝ փողոց ցատկեց: Երբ ծովեզերքը տանող ճանապարհին անկիւնը կը մտնէր, քանի մը ձկնորսաց պատահեցաւ, որոց զգեստներէն ջուր կը հոսէր, եւ որոց հրեաներն ու աչքերն արիւնով թամփխրած էին:

— Ի՞նչպէս, ճովուն վրայ գտնուողները վերադարձա՞ն, հարցուց:

Չկնորսաց մէկը՝ ընկերներուն ակնարկութիւն մը ընելէ ետքը պատասխանեց.

— Այո՛.

Տիկին Պօտուան՝ այս պատասխանին վրայ՝ սկսաւ աճապարել դէպ ՚ի ծովեզերքը: Չկնորսաց մին յարեց՝ ծովը ցուցնելով,

— Տե՛ս, տիկին, դուք ու՞ր կերթաք:

(Արգիլել աշխատելով) Ի՞նչ օգուտ պիտի ըլլայ երթալէդ. օդը շա՛տ գէշ է. վերադարձէք ձեր տունը. մեք հասկցանք. այլ եւս երկիւղի՛ տագնապի բան չ'կայ:

— Ամենքդ ալ եկա՞ք.

— Այո՛.

— Երդում՛ ըրէ՛.

— Բայց ինչո՞ւ կը տառապիս. ապա հով տեղ մը գացած սպաստանած են ա՛յն ձկնորսներն, որ չեն կրցած գալ մեր ծո. վեգերքն:

Տիկինը այս ծանօթութեան վրայ ալ չ'հանդարտեցաւ. ճամբան շարունակելու շարժումներ ըրաւ, բայց ձկնորսը դարձ. եալ արգիլեց: Յայնժամ դէմն ելաւ սպասուհին՝ բռնորովին այլ յայլէ եղած, եւ ըրաւ.

— Ո՛չ, Տիկի՛ն, ոչ, դարձէ՛ք, մի՛ երթաք եզերքը:

Տիկինն գոյնը նետեց. աչքերը խաւարեցան. սպասուհին թեւը մտաւ, որ պէս զի չիյնայ. ակռաները կրճտելով գոչեց.

— Յանցանքն իմս է. ես պատճառ եղայ:

Չկնորսներն ուզեցին՝ զանի մերձակայ տուն մը տանիլ, բայց մերժեց եւ ըսաւ.

— Ես անպատճառ պէտք է տեսնեմ զանոնք:

Որդւոյն տունը գնաց սպասուհին հետ: Այդ տա՛նը՝ ուր ուրիշ ձկնորսաց տունէրու մէջ գտնուած ամենապիտանի կարաւ սիքը միայն կային, տարապայման մաքրութեամբ կը փայլէր: Չաւակին կէնը տակաւին երկու օրէ՛ ՚ի վեր կլած էր որդեծընութեան անկողնէն. խեղճը սաստիկ տագնապէն շփոթած շուարած էր. արտաւաւից աչքով կ'սպասէր մօրը վերադարձին. որ ծովեզերքը իջած էր տեղեկութեան համար: Խեղճը, երբ տեսաւ կեսրոջը՝ տիկին Պօտուանի ներս մտնելը, տիկի՛ն, ըսելով՝ ընդ առաջ վազեց:

Տիկինը, ո՛հ, աղջիկս, ըսելով՝ թեւերը բացաւ անոր, եւ երեք թռուները կուրծքին վրայ սեղմեց:

Եւ սհա այս ատեն փողոցէն շատ մը ձայներ լսուեցան, բայց ո՛չ տրամուծեան, այլ ուրախութեան ձայներ:

Յանկարծ բացուեցան տանը դռները :  
 Լուի դրան սեմին վրայ երեւցաւ՝ բարե-  
 կամներէ ու ազգականներէ շրջապատեալ :

Լուիի ամուսինը առաջ վազեց խայ-  
 տանօք . փոքրիկ տղայքն ալ ցատկուտելով  
 վազեցին դէպ 'ի իրենց հայրն : Միայն տի-  
 կին Պօտուան արձանացած կանգնած էր :  
 Լուի մայրը տեսնելուն պէս՝ գլխարկը մէկ  
 կողմ՝ նետեց , եւ ո՞ն , մայրիկս , պօռա-  
 լով՝ դէպ 'ի մայրը կը վազէր , ան ալ հար-  
 կադրեցաւ տարածել քազուկները , եւ  
 կուրծքին վրայ սեղմել ոգեհատորն , խոս-  
 տանալով ուխտելով՝ այնուհետեւ 'ի միա-  
 սին քնակիլ որդւոյն , հարսին ու թուանցն  
 հետ : Էւ երջանկութիւնը ընդ միշտ տի-  
 րեց տան մէջ . . . :



ՀՀ Ազգային գրադարան



NL0552384

ՀՀ Ազգային գրադարան



NL0552383

ՀՀ Ազգային գրադարան



NL0552382

ՀՀ Ազգային գրադարան



NL0552381

